

ՄԵԾԱ.ՄԵՇ ՀԱՐՈՒՍ.ՄՔ ԲՆՈՒԹԵԱՆ

իսքիայի և ձաւայի այս տարուան յանկարծահաս արկածք՝ ամէն կողմ խոր աղդեցութիւն գործեցին, որք և յարուցին յիս այս յօդուածու գրելու գաղափարը։ Նախ և առաջ պէտք է դրուատել հանգանակութեան այն զգացմունքը՝ զօր ցուցին քաղաքակիրթ ազգերն, Մուրմայ և Հանգարիսյ ողոզելոց և Քաղաքիսլույի խորտակելոց նկատմամբ։ զգացմունք՝ որ ապագային մէջ աւելի ևս զարգանարվ, պիտի լինի անչուշա մեզ ապահովագոյն պատրաստան ընդդէմ վասանգաց։ Գայ պիտի թերեւս ժամանակ, յորում ամէն ազդ իրենց տարեկան ծախուց հաշուեատարին մէջ գրոշմեն որոշեալ գումար մը՝ մեծ ամեն զժրազդութեանց դարման տանելու, և փոխադարձ ապահովութիւն մը պատրաստելու համար ընդդէմ ամենի բռնութեանց բնութեան, և նորա մերթ ասա և մերթ անդ՚ի գործ զրած յանկարծական յարձակմանց։

Արդէն այս բնական հարուածոց ու մանց գէմ կանգնեց գիտութիւնն իր յագթանակը Այսպէս կայծակներն որք զմեզ մեր տանց մէջ կը հարուածէին, նուաճուած են շանթարգեներէ. արեւելեան ժանտախտն և բրուտութիւնն դրեթէ ջնջուեցան, ծաղիկ հիւանդութիւնն իր կոտորածը շափառեց։ Եւ եթէ ֆիլքսերայի պէս նոր հարուած մը մեր այդեւստանները աւերելով կը սպանայ հառարակաց բարօրութեան, ահա ուսումնական ճեմարանք զհարուածք քննելով՝ պաշտպանութեան միջոցներ կը ցուցընեն։

Ստուգիւ կան ուրիշ բնութեան հարուածներէն աւելի ահաւոր հարուածներ, զորս նուածելն մեր ձեռքքը կը լի-

նէր արդեզք՝ եթէ ուղիղ բանն բացարձակ իշխէր ուրիշ կրից վրայ. այս հարուածներն ահա պատերազմնքն և խումբիթիւնք են. Ոչ հրաբուղիք, ոչ ողովմնանք, ոչ սովոր և ոչ ժանտախտք ատոնց շափ կոտորած և ընչից կորուստ չեն պատճառած։ Կը յստանք որ մըտաց յառաջադիմութիւնն և այժմեան ափեզերաց ամէն մասերու մէկ մէկու հետ ունեցած բազմաթիւ յարաբերութիւններն, վաճառականութեան, նաւագնացութեան, երկաթուղեաց, և այլն, միջնցաւ, երթարով պիտի նուազեցընեն այս հարուածները, և վերջապէս իսպառ ջնջեն։

Հոս պիտի խօսինք մարդկային կարողութենէն զօրաւորապոյն եղող հարուածոց վրայ, որք երկրագնատոյս կազմութենէն և մինուղորատէն յառաջ կուգան, որք են. 1. Երկրաբանական պատահարք. ինչպէս՝ ջրհեղեղ, երկրաշարժ, հրաբուղի. 2. Օդաբանական արկածք. ինչպէս՝ միրիկ, թաթառք, վիթորկալից հողմնանք, ողովմնանք, երաշտութիւն և սով։ Ցարակցս չկայ որ մեր երկրագնատն ըստ ամենայնի բնակելի առնելու համար՝ իրենց շատ աղէկ կարգի գրուած են. բայց ինչպէս ամենայն աղէկ կարգաւորուած զորութիւնք՝ ի գործ գրուին՝ շատ գծուարին կը լինի արկածներէ ազատ մնալն, այսպէս ալ բնական զօրութեանց հարկաւոր շարժմնանքն աստ անդ մասնական ձախորդութեանց պատճառ կը լինին, որք թէպէտ և աղետարելք են մի մասին, սակայն բոլոր մարդկութեան մեծ վնաս հացընելու անկարողք։

Ակսինք անոնց քննութիւնը, և ցուցնենք որ եթէ անկարող ենք զանոնք

նուաճելու, գէթ իրհակք անոնց օրէնք-ները ուսանիլ, նախատեսել, և շատ անդամ նաև գարման առնել:

ՍՈՎ

Պատմութեան յիշած առաջին սովն Եզիպտոսին է, Յովսեփից գործակալութեան միջոց՝ Ամէն մարդ գիտէ թէ այս նշանաւոր անձն ինչպէս աղատեց զրոլը Եզիպտոս՝ առատութեան համբարանոցներու օրինադրութեամբ. օրինադրութիւն մը՝ որոյ հետևեցաննաև զանազան երկիրներու մէջ, ինչպէս ՚ի Գաղղիա այս դարուս սկիզբներն, և ՚ի Նախողի վերջին գարու մէջ կարուս գէ ժամանակ:

Եթէ բնական կերպով մեկնել ուղենք այս մեծ դէպքը, որ Եզիպտոսի ընկերական վիճակը փօխեց, գրիթէ բոլոր աշխարհաց հարսաւութիւնը Փարաւոնաց, վերջը թագաւորաց, ապա Մամելուքաց, և վերջապէս Խէտիֆներուն քով ժողովելով, նախ պէտք է դիտել այս երկրիս արտաքրյակարգի դիրքը՝ օդաբանական տեսութեամբ: Հոն տեղական անձրեներն չեն՝ որ ամէն բան յառաջ կը բերեն, վասն զի՞ ՚անձրեւը. այլ այն անձրեներն՝ որը կը տեղան անկէ շատ հեռու հասարակածի երկիրներուն մէջ, որ կը սկսի Նեղոսի ակունքն, սկսեալ լայնութեան 17 աստիճանէն, առանց լնդունելու ուրիշ գեաոց յորձանք՝ Այս անձրեներն կը պատճառեն Եզիպտոսի սղովմանքը, միակ և անհրաժեշտ պայման բալոր հնձոց: Յովսեփից ժամանակ և իրմէ հազարաւոր տարիներ ալ առաջ, Եզիպտոս միշտ ենթարկեալ էր սովի, քանի որ Նեղոս չէր բարձրանար, և իր բեղմանաւոր տիղմով չէր ծածկեր զերկիրն՝ Անտուառակոյս այս հարուածէն աղատ էին մերձակայ երկիրներն՝ Փիւնիկիա, Փիոր Ասիա, Յունաստան, Սիկիլիա, Հիւսիսային Ափրիկէ, որք տեղական անձրեներէ կոռոդուէին, որք և շատ անգամ Եզիպտոսի կարօտութիւնը կրցած էին լեցընել:

ուականութիւն չկար, ուստի Եզիպտոս՝ երկու կողմէն շրջապատեալ անապատ, ներէ՝ յոյսը իր ունեցած միջոցները իմաստութեամբ գործած ելու վրայ միայն պէտք էր դնել, միայն Յովսեփից առատութեան համբարանոցներն կրնային փրկիլ զինքը: Վերջը ծովային վաճառականութիւնն զեզիպտոս ապահովութեան մէջ դրաւ, վասն զի առատութեան տարիներն իր ցորենները դուրս տալով կը հարստանար. իսկ այն տարիներն՝ յորս ողողմունքն անքաւական կը լինէր, կրնար գուրսէն ցորեն գնել, և մինչև Աղէքսանդրիոյ նաւահամնդիստըն զանոնք բերել տալ: Սուէզի ջըրանցցից փորուելուն վերակացու եղող գաղղիացի ճարտարապետինոր գաած Գանեորի Հրայրատակաւան յայտնի կը տեսնուի, որ այս զանազան երկիրներու ցորենց անուղղակի և անընդհատ փոխանորդութեան թուականին սկիզբն՝ մեր թուականէն երեք զար առաջ կը սկսի: Այս հրովարտակն, որոյ թարգմանութիւնը վերջերս հրատարակեց Գ. Միլլէր (Journal des savants, avril 1883) այսպէս կը սկսի.

« Արագինեակ Պատուես Բարերար և Բերինիկէ թագուհին բովանդակ Եզիպտոսըց համար աղէկ տեսչութիւն հաստատեցին, երբ անգամ մը գետին անունն շատ քիչ եղած լինելով, որ բռնը բնակչաց համար վախսնալու առիթէ էր, որք կը յիշէին նախընթաց շատ թագաւորաց ժամանակ հանդիպած թշուառութիւնները, անոնք մեծ խընակք և հոգ ցուցին, Ասորեսատանէն, Փիւնիկիային, Լիպրոսէն և ուրիշ շատ անդերէ սուզ գնով ցորեն բերել տալով. և որովհեակ այսպէս աղատեցին Եզիպտոսի բնակիչները, աստուածներն ՚ի վարձ այս բանիս իրենց թագաւորութիւնը հաստատեցին, և այլն, և այլն ։ Հիմակուան Եզիպտոսի նկատմամբ՝ գաղղիացի ճարտարապետներն նեղոսի արգելման գերանը հնարեցին, անբաւական ողողմանց զարման մ'առնելու համար: Քիչ ժամանակէն՝ երբ Նեղոսի և իր մէջ թափող գետոց ընթացքին

վրայ դիտողութեան կայաններ հաստատուին, յիպիսին և անկէ անդին, միացընելով Գայիրէի հետ հեռազրական դժով մը, Եգիպտացիք՝ քանի մ'ամիս առաջ և մօտ քանի մը տաս, նորդամէզը, պիտի զիստան թէ իւրաքանչիւր ողողման Նեղոսի բարձրութիւնը որչափ պիտի լինի. ինչպէս Գայլ զիոյ մէջ ջրաբաշխական կայաններն զարմանալի ճշգութեամբ՝ առաջուը ընէ կը ցուցընեն զիխաւոր դեսոց՝ Սենի, Լուառի, Սոնի, Ռոնի, և այլն՝ աճումը:

Ուրիշ երկիրներու մէջ տարրեր կերպով կը հանդիպի: Այս տեղերն սովոր անձրեխն կախումն ունի, որ կը տեղայ, կամ լսաւ ևս՝ չի տեղար երկրին վրայ. երաշտութիւնն երբեմն կրնայ շատ տարիներ տեսել մի և նոյն գաւառին մէջ, Պատմութեան յիշած այս տեսակ հին դէպք մը՝ ուսումնական օգտակարութիւն մ'ունի. այս է այն սովո՞ր Քրիստոսէ ինն դար առաջ Արաբարու ժամանակ Պաղեստինու երկրին վրայ երկու երեք տարի սաստկացաւ: Ծանօթ է Սարեփթապի այրւոյն սրտաշարժ պատմութիւնն, ուսկից Եղիս մարգարէն պատառ մը հաց կը խնդրէր. « Աստուած ինծի վկայ է, պատոսախանեց կինն, որ այս կամփսակիս էջ ափ մ'ալիւր միայն ունիմ, զոր փոքր նկանակ պիտի շինեմ ինծի և իմ որդուոյս համար. պիտի ուտենք զայն և պիտի մեռնիք »: Այս ժամանակս դարձեալ իսրայէի թագաւորն և իր հազարապետն քիչ մը խոս փնտաելու ելերէին, զատ զատ ճամբաններ բռնելով, որ թերես կարենան գտնել. բարեբախտաբար կուդայ Եղիս՝ թագաւորին իմացընելու երաշտութեան վերջը: Բաց ՚ի գերբնականէն՝ որ բոլոր այս պատմութեան մէջ կ'երեի, անկարելի է չտեսնել Եղիս, ոչ միայն տեսանող մի ըստ Աստուածոյ, այլ նաև տեսանող մի ըստ ուսումնական իմաստին: Մարդ մը՝ որուն զգեստն կենդանւոյ մորթէ, գօտին մաշկեղէն, որուն գալստենէն կը սարսափէին նոյն ժամանակի թագաւորներն, որ հալածանքէ փախչելով կե-

նաց մեծ մասը անսապատաց մէջ անցուցեր էր. մարդ մի՝ որ երկայն ժամանակ բնութեան մեծամեծ երեսյթները դիտելու վարժ լինելով, զիտէր որ եթէ չըրութիւնն գաղըէր, անձրեներն մըրբիկով մը, փոթորիկով մը պիտի սկըսէին, որ յանկարծակի պարզ երկնքի վրայ պիտի տեսնուէին: Եւ ստուգիւ, երկինք պարզ էր այն օրն՝ երբ Եղիս զրոյր իսրայէլ ժողովեր էր կարմելայ բարձանց վրայ: Եղիս իր պատանեակը կ'առաքէ լիրան գագամին՝ ըսերով իրեն. « Դիտէ ծովու հորիզոնը և եկուը ինձ ըսէ ինչ որ տեսնես »: Մէկէն պատանեակն կը գառնայ և կ'ըսէ մարգարէին, թէ ամսկ մը ձեռաց թամբի մեծութեան չափ ծովէն կ'ենէր: Այս բանս բաւական կը լինի. Եղիս կ'ըսէ իրեն. Չնաս և իմաց սուր թագաւորին՝ որ լծէ կառքը և ճամբայ ենէ, որ պէս զի անձրեկի շրոնուի »: Եւ ահաքիչ վերջն այն փոքրիկ ամսկն արեմուտքէն ելնելով մեծցած և բոլոր երկինքը ծածկած էր. այն ատեն սաստիկ հողմնանք կը սկսին շնչել, և անձրեն կը սկսի տեղալ: Բեղմնաւոր անձրեաց ժամանակն սկսեր էր. Պաղեստին ազատած էր:

Քանի մը ատրի առաջ Զինաստանի կապայ գետայն հիւսիսային կողմն եղող բալոր երկիրը չորութիւնն կը ճարակէր, և ահաւոր սով տիրեր էր. իսկ հարաւային կողմն հեղեղօրէն անձրեներ և ողողման ձախորդութիւններ անպակաս էին: Այս գաւառներուն մէջ, ինչպէս նաև յանգիխական Հնդկաստան, մարդ մինակ բրինձով կը մնանի. եթէ անձրեն պակսի, բրինձն՝ որ ջրոյ շատ պէտք ունի՝ առաջ չի գար, սովո՞ր կը սկսի. և այս երկիրներու մէջ, որք արտաքին յարաբերութիւններէ զուրկ են, ոչ ոք օգնութեան կու գայ բնակիներուն՝ որ կը ջարդուին. ինչ կ'ըսեմ ջարդուիլ, մանաւանդ թէ բնայինջ կը լինին. վասն զի շինական սովերու զոհերն՝ որք անօթութենէ կը մեռնին՝ միլիոններու կը հասնին: Զիքէվայի մէջ եւրոպական դիտանոց մը

կայ քարոզւց ձեռքն, ուր սարսափ, մամբ կը նշանակուէր ձախորդութեան առաջ երթալն, վերջապէս մրցիկ մ'եկաւ, և գաղրեցոց զերաշառութիւնը, երկայն ժամանակ է որ գաղրեր է:

Այս պատահարը անտարակոյս ընդհանուր օրինաց ներքոյ են. և այս օրէնքն հետեւալ կերպով կրնայ բացատրութիւնը: Երաշտութեան ժամանակի շըրջաններն մինուղորտին վերին հոսանքներէն կախումն ունին. այս ժամանակի շըրջաններն առաջ կու գան՝ երբ հոսանքներն զուրկ կը լինին՝ ի գանդրահեր ամպոց, և կը գաղրին՝ երբ վար իշխող շըրջանաւոր շարժումներն կը սկսին հոն, և իրենց հետ մէկուել մինուղրտին վարի կարգերը կը բերեն զգանգրահերս. այն ատեն կը սկսին մրրիկը, փոթորիկը և իրենց բերքնաւոր յորդ անձեներն: կը մնայ քննել թէ ինչո՞ւ համար գանգրահեր ամնքը աստ անդ կը պակսին, բնչ պատճառաւ մինուղրտին վերին հոսանքն միշտ մի և նյյն կարգերուն մէջ չեն ընթանար: Այս մեծամեծ խնդիրներն աւելի հասարակածին օդաբանութեան կը վերաբերին՝ քանթէ բեռներուն. ուստի միշտ մոտածած եմ որ զիսաւորաբար առաջնոյն վրայ պէտք է զրադիլ. վասն զի բեռնացին շըրջանակներէն անդին եղաղ զրից տաժանելի և միանդամայն վտանգաւոր ուսմունքն՝ գիտութեանց բոլորովին անողզակի ծառայութիւն կը մասաւցանէ: Յովսենքէն և եղիա մարգարէէն վերջն ոչ ոք յանդգնեցաւ սովոր գուշակելու: Սակայն Պ. Գ. Հերչէլ կարծելով գտած լինել յԱնդիլա՝ կապակցութիւն մը ցրենի գնոց փոփսիսութեան և արեգական բծերու յաճախութեան մէջ, շատ մը գիտուններ երեա. կայեցին թէ նոյն իսկ աստղերն այս նըկամամբ գուշակութեանց աղրիւր կը լինան լինել: Վերջի ժամանակներս հընդիկ գիտուն մը, Ռատ Պահագուր Քէրոյ Լաբոհման Քայատը, Տէլքան-Վարժարանի վարժապետ, 1880 տարւոյն մէջ անդիսական Հնդկաստանի համար երաշտութիւն մը գուշակեց: Բատ իրեն՝

արեգական բիծերն անձրեներու հետ ուղիղ համեմատութիւն ունին, ուստի որչափ աւելի արեգական վրայ բիծերնին, այնչափ ևս 'ի Հնդկաստան անձրեկու գայ. հազիւ թէ բիծերն նուազին, որ գրեթէ տասնումէկ տարին մի անգամ կը հանդիպի, շրուութիւնն կ'ըրկիսի, և անոր հետ սսվա: իսկ արդ 1879 տարին կը համապատասխանէ բիծերուն ամենափոքր նուազման կետին, ապա ուրեմն 1880 պիտի լինի սովի տարի:

Հնդկաստանի մէջ շատ անգամ սով կը հանդիպի. անգղիական տէրութիւնն գետ չկրցաւ ազատել զթշուառ երկիրն այս հարուածէն. չկրցաւ Հնդկայց ըլլրինձէն զատ ուրիշ բան կերպը նույն կերպը ներկայ պակսի բրնձի համար, այնպէս որ եթէ պակսի բրնձի հունձքն՝ որ ամեննեին շրուութիւնն չի վերցըներ, ուտելու բան չի գտնուիր:

Բայց միայն Հնդկաստան չէ որ այս ձախորդութիւնն կը կրէ: Մանիքայէն անդին եղող գիտունը կը հաստատեն, թէ արեգական բիծերն անուղղակի կերպով լուսատնի հրապարակին մնան. կութեանց վրայ ազգեցութիւն ունին: Օրինակի համար, 1870 թին՝ որ բիծերու մեծագոյն աճման ժամանակն էր, հաշիւ ըրին որ Անգղիոյ մէջ ութէն ինչուան տասն հազար մնանկութիւնք եղած են. իսկ ընդ հակառակն 1867 թին, որ բիծերու փոքագոյն նուազման ժամանակն էր, անսնց թիւն 16000ի հասած էր. և ահաւասիկ այս եղական համեմատութիւնը այսպէս ջանացին բացատրել. Շատ բիծեր շատ տաքութիւն կը պատճառառն, և հնտեւաբար առատ անձրեկ. Յորդ արձրեներն շատ բրդինձ առաջ կը բերեն. Շատ բրդինձն՝ Հնդկաց բարեկեցութեան պատճառ է. Հնդկաց բարեկեցութիւնն անդիպական բամբակեղինաց նկամամբ բազմաթիւ վաճառականական յանձնարարութիւններ կ'արգիւնաւորէ. Յանձնարարութեանց յաճախութիւնն կը խափանեն զննանկութիւնն: Ուգեմն պէտք է որ բիծերու մեծագոյն աճման միջոցն՝ Ան-

զդիոյ մէջ քիչ լինին ասանկութիւնք, և
փոքրագոյն նուռազման միջոցն շատ:

Չենք ուզեր ժխտել թէ Հնդկոց թը-
շուառութիւնն Լոնտոնի հրապարակին
տացուածոց վրայ աղջեցութիւն ունի.
բայց խնդիրն է հասաւատապէս զիտել
թէ արդեօք այս նորօրինակ հաւաքա-
րանական հնարից նախընթացքն ճշ-
մարթնեն. այսինքն, թէ արդեօք իրաւ-
ցընէ շատ բիժերն շատ տաքութեան
պատճառ կը լինին, և հունաբար շտա-
անձրներու:

Հոլանտացիք՝ որք իրենց Ասիոյ մէջ
ունեցած երկիրներուն համար այս խըն-
դիրներուս մէջ Անդդիացւոց պէս շտհ
ունին, տեհնացն խնացով քննել ըս-
կան այս վերը դրուած նախադասու-
թիւնները. աստ ես իրենց հանած հե-
տեւթիւնները կը նշանակեմ:

Առաջին կէտը մեզի բացատրելու հա-
մար, Պաթաւիսյի Դիտարանն հիանա-
լի գիրք մ'ունի. որովհետեւ, բաց յան-
ձրեններէն, Նոր-Հոլանտական Հնդկա-
ստանի կիմսյոյն նշանաւոր կանոնաւո-
րութիւն մ'ունի: Արդ ահաւասիկ ա-
րեգակնային բիժերու ժամանակի շըր-
ջանի մը միջոց, ձաւա կղզւոյն մէջ դի-
տուած տարեաց ջերմութեան միջն
աստիճաններն.

Տարի. Միջն աստիճան ջերմութեան.

1866	25°, 9
1867	25, 8
1868	26, 2
1869	26, 0
1870	25, 7
1871	25, 7
1872	25, 8
1873	25, 9
1874	25, 6
1875	25, 9

Աւեմն եթէ բիժերն արդիւնք մ'ա-
ռաջ բերած էին, ոչ թէ ջերմութեան
աստիճանը բարձրացուցեր էին, այլ
տասն աստիճան վար իջեցուցած:

Բայց արդեօք շատ բիժեր գէթ շատ
անձրեւ յառաջ կը բերեն: Ոյս բանս
այն ատեն խորհրդաւոր ներգործու-
թեամբ մը պիտի լինէր, ընդհանուր ջեր-
մութեան աստիճանէն անկախ: Իրաւ-
ցընէ, տարեկան անձրեններու քանակն
շատ փոփոխութիւն կը կրէ, ուստի այս
անձրեններն տարեկան ներմութեան մի-
ջին աստիճանէն կախումն չընին, որ
այս կիմսյոյն մէջ գրեթէ անփոփոխ է: Ի-
ննդիրը լւծերու համար առնունք նոյն
իսկ հողինակին (Լաբրոհման բայցար
գիտնականին) գտած քանակութիւն-
ները, և ըստ դիպոյ ունունը յիսուն
տարրուան միջոց 1826 էն մինչև 1876,
Մատրասի մէջ եղած անձրեւ զիտո-
գութիւնները, Անձրեկի բարձրութեանց
համար (անդդիական մատնաշափ) կը
գտնենք.

Թուական
մէծագոյն աճման կետից
արևային թիժերու:

1830	.	.	.	59, 0	մատնաշփ.
1837	.	.	.	53, 3	»
1848	.	.	.	72, 7	»
1860	.	.	.	47, 2	»
1867	,	.	.	56, 4	»

Թուական
փոքրագոյն նուռազման կետից
արևային թիժերու:

1833	.	.	.	49, 3	մատնաշփ.
1843	.	.	.	81, 0	»
1856	.	.	.	27, 6	»
1864	.	.	.	41, 4	»
1870	.	.	.	62, 9	»

Այսպէս ուրեմն թուականներ կան յո-
րըս կարծես թէ կ'աներենութանան բի-
ժերն, և այն ատեն աւելի անձրեւ կու-
գայ, քան թէ մէծագոյն աճման թուա-
կանց մէջ: Նշատմամբ միւս տարինե-
րուն, կը գտնուի 24 մատնաշփ, 24
մատնաշփ, նոյն իսկ 18 մատնաշփ,
թէպէտ և այս անձրեններն չեն համա-
պատասխաններ փոքրագոյն նուռազման
կէտերուն. նոյնպէս կայ տարի ալ որ

66, 74 և մինչեւ 80 մասմաշափ ալ կ'անձնեւ, թէպէտ և բիծերու մեծագոյն անման կետից չեն համապատասխաներ: Հոյս այս փորձերուն պատմութիւնը ընկեն շատ երկար կը լինի. վերջնական հետեւանկըն այս է՝ որ այս երկու կարգի երեղիթներուն մէջ յարաբերութիւն չի այ, և թէ տղայական մրտածութիւն կ'երկի ուզել արեգական բիծերու ձեռքով ողղողմունքներ, երաշտութիւններ կամ սովեր գուշակել:

Անոր համար աւելի դիւրին է գետութիւն մը հնարել, քան թէ տարակուսական պարբերական երեղիթներու քննութեան ետքէ լինել: թթէ ոք կարենայ մասնաւոր երեղիթի մը վիճակադրութեան տարերըը մէկտեղ ժողովել, տասէն մինչեւ ատառերկու տարուան, աւելի կամ նուազ ժամանակի շրջան մը հաւանական ցուցընելու շափ, կ'ըսէ թէ ասոր պատճանն արևորիթերն են և կամ թէ լուսնի երկրիս վրայ ունեցած ազդեցութիւնն է, և այսու որպէս թէ ամենայն ինչ կը պարզի: Աւելի աղէկ չէ երեղիթ մը յինքեան քննել և ուսանիլ, քան թէ այսպիսի ենթադրութեամբ յառաջ երթալ:

Զմեղ զրադեցընաղ նիւթն այսպէս քննելով՝ տեսանիք որ մինուլրտին բարձրագոյն կարգերու մեծամեծ հոսանաց հետ կապակցութիւն ունի, որոց ձեռքով վերագոյն մասանց օգնարեգական տաքրութեան ազդեցութեամբ՝ դէպ'ի երկու բևեռները կը մըղուի: Այս շարժմանց գլխաւոր պատճանն շատ ընդհանուր և պարզ է, այսինքն մեր երկրագիտոյն հոլովումն, որ այս հոսանաց ուղղութեան մէջ մասն ունի. և ցամաք երկիրներու և ծովերու բաժանումն այնպէս անփոփոխ են, այնպէս հաստատուն՝ որ կարծուեցաւ թէ այս երեղիթներու յաճախ փոփոխութեանց մէջ, բոլոր երկրի համար մէկ տարիէ մէկալ տարի սասց փոխանորդութիւններ յառաջ կու գան:

Եզր ցամաք երկրի մէկ մասին վրայ անձրև չգայ, մի և նոյն ժամանակ բա-

լր ցամաք երկրի վրայ չի կրնար պակմիլ. ինչ որ ալ լինի՝ ամբաղջ կիսազբնայ մը վրայ չի կրնար չտեղալ: Հետեւաբար եթէ գաւառով մը մէջ հունձքն պակաս լինի, ուրիշ քիչ կամ շատ հեռու երկիրներու մէջ առատ կը լինի: Արդ ներկայ գարուս մէջ վաճառականութեամբ և նաւարկութեամբ կրնան առատ երկիրներու աւելորդ հունձքը՝ փոխազբել այն երկիրներու մէջ ուր շեն գտնուիր: Անոր համար քաղաքա, կանացիալ երկիրներու մէջ սով տեղի չի գտներ, և միայն չնդիկաստանի և Ճենաստանի բազմաթիւ և միամենունդ ժողովրդոց մէջ կը հանդիպի, երկիրներ՝ որք աշխարհիս միւս մասերէն բոլորովին զատուած են. և կամ կը հանգիպի հարաւային Ամերիկոյ քանի մը մարդաշատ մասերու մէջ, որք հաղորդակցութեան ճամբաններ չունին: Քաղաքականութեան զարգացումն վերջապէս պէս պիտի չնդէ բոլորովին կսմնն, թէպէտ իր բնական պատճառն մեր կարողութենէն վեր գտնուի:

ՈՂՅԱՄՈՒՆՔ ԵՒ ԶՐՀԵԿԵԼՔ

Կը գտնուի աշխարհ մը, որ թէպէտ միշտ ջրերու աակ երթալու վուանգի մէջ է, բայց կրցեր է յաղթանակ կանգնել ծովու դէմ: Հողանոտա՝ որոյ երկիրն մասամբ մ' Ռվիկիանոսի մակերեւութիւն ցած է, և ասոտ անդ նաւու պէս քանի մը մէզք ջրոյ մէջ է, մարդկութեան ծովու դէմ ըրած յաղթութեան կոթուող մ' է: Ընդարձակ և հարուստ մարդագետնոց մէջ, որք փոխտեր կ'անուանին, ջրանցներ բացուած են. որովք ջուրն շարունակ կը պարզուի արքիմեդեան պատուակներու միջոցաւ, որք կէս գլաններու մէջ հաստատուած են, և կը գործեն հողմաշարժ ազօրիկով կամ շողիէ մեքենաններով. այսպէս մարդագետնոց ջաւրն ջրանցքէ ջրանցք անցնելով՝ ծով կը թափի՝ տեղատութեան ժամանակ: Բոլոր երկիրն Ռվիկիանոսի վասակար յորժանաց պայպաներէն պաշտպանուած է՝ ցիցերէ և աւա-

զէ զարմանալի կերպով շինուած թումբը բերով, որք մեծամեծ երիթներով ամրացեալ են: Բնակիչներն ամէնքն կը տեսնեն զվասնդն՝ որ կը սպառնայ իրենց՝ եթէ այս պաշտպանող թումբերն տեղիք տան: Լած եմ չոլանտայի մէջ հետեւալ պատմութիւնն՝ որ ըսածս կը հաստատէ: Տամն տասուերկու տարեւան տղաք՝ որք Արփէտամ թումբին վըրայ կը խաղային, օր մը կը տեսնեն որ ջուրն հոն իրեն ճամբայ մը կը բանայ: արդէն թէի չափ հաստութեամբ ջոյ ցայտ մը թումբին քոյլէն կը բղխէր: մէկէն տղացմէ մէկն կ'երթայ թիւկամրգն բացուածքը կը գոցէ: և մինչդեռ իր ընկերներէն ոմանք զի՞րը հաստատուն բոնելու համար՝ իրեն կ'օգնէին, միւս ներն կը վազին՝ ՚ի քաղաք լուր տալու: զանգակ կը զարնուի և քաղաքացիք հարկաւոր գործիները առած հոն կը դիմեն: Հազիւ կը հասնին. վասն զի մեծ արագութեամբ գուրս ցատքող ջուրն իր ճամբան կը լայնցընէր. մէկէն ՚ի մէկ չարեաց գարման կը լինի, և յետոյ ամրացընելով երկրին այն մասը՝ վտանգէն կ'աղասին: Տղաք երկրին աղատարաք եղեր էին:

Ոնոր համար յրերու հսկողութիւնն պարզ պաշտօնէի չէ յանձնուած, այլ նոյն իսկ թագաւորին: Թագաւորն ինքնին դրուի է Զրոյ քաղաքին (Waterstaat), և այս պաշտամանս մէջ քան զսովորական ստորակարգ պաշտօնեայ մաւելի դիւրամերձենոլի է:

Այս յիշատակներս թերեւս քիչ մը շատ մանրամասնաբար յառաջ կը բերեմ, լաւ ցուցընելու համար ազգի մը բնաւորութիւնը՝ որ միշտ պատերազմի մէջ է, և յաղթող է ընդգէմ բնական թշնամույ մը: Ասկից առաջ կու գայ անշուշա իրենց այն ձեռնարկութեան ոգին և այրական զօրութիւնն, որովք համբաւաւոր հոչակուած են: Բայց թէ գաղրին ջանքերն, մէկէն թումբերն տեղիք կու տան, ջուրն ամէն տեղ կ'ողղովէ, և կը լինի զեղեղեղ, նման այնմ որ 1237ին մէկ զիշերուան մէջ 80,000 բնակիչ ծախեց, ըստ աւանդութեան,

և Զուխտերզէ մեծ ծովածոյցը ստեղծեց: Զրհեղեղ. հարուած ամենահին, որոյ յիշատակն մարդկանց մտաց մէջ մնացած է: Գրեթէ ամէն ազգ իր աւանդութեանց սկիզբն յրհեղեղ մը կը դնէ. յայտնի է որ այս գաղափարս պարզ երևակայութեան ծնունդ չէ, գէաքն հանդիպելէն վերջը շինուած պատմութիւն մը չէ: Արշափ ալ հեռու ենթադրեն երկրաբանիք այս երեսոյթներուն հնարաւորութիւնը, պէտք է որ շատ տուաջ մարդիկ եղած լինին և արդէն երկրիս վրայ բնակած: Ներկայ գարուս մէջ որովհետեւ սկսան մեր երկիրներուն բարձանց կազմութեան պատճառ եղաղ զօրութեանց պատճառը քննել և բացատրել, յրհեղեղներու խնդիրն, ըստ իս, աւելի ևս իմանալի կը լինի:

Ցուրտ թեսուաց երևան ելնելու թուականէն սկսեալ, երկրագնտոյս ցրտութիւնն առանձին ընթացք մը բռնեց: աւելի շուա և աւելի խոր կերպով յառաջ գնաց թեսուներու հետ հալրդակցութիւնն ունեցող ծովերու տակ քան թէ ուրիշ տեղիք, Անկէց ՚ի վեր՝ այս ծովերուն տակ պնդացած արտաքին կերպարանքն երթալով կը ծանրանայ, իսկ ներքին հեղուկ գանգուածն՝ այլ և այլ տեղեր անհաւասար ճնշմանց ենթարկուեցաւ: Հաւասարակշռութիւնն նորէն հաստատուելու համար հարկ եղաւ որ քիչ խիս եղաղ արտաքին կեղեն կամաց կամաց գորդանայ քանի մը տեղիք, ուստի յառաջ եկան այս արտաքին կերպարանաց զանազան մասանց. մէջ եկեղեցներ, որք զերկիրներն երթալով կը բարձրացընեն, և ծովերու յատակը կը ճնշեն: Այս շարժումներն արդէն անկանոն և այլ և այլ կողմեր ճեղքուած մակերեւոյթի մը վրայ չէին կրնար կատարուիլ, առանց պատճառը լուր աստ անդ անզգալի ելլեխներ, ընդարձակ միջոցներու վրայ, ինչպէս գեռ հիմայ ալ կը գտնուին: Բայց յայտնի է որ նախնական գարուց ջրանին մէջ երբ այս պատառուածք և ելլեջք լերանց մեծամեծ շղթաները կը ձեւացը.

նէին, երեսյթներն երբեմն երբեմն նաև յանկարծակի պէտք էին տեղի ունենալ. ցամաք երկիրներու ընդարձակ մասունք, երկար ժամանակէ 'ի վեր դուրս ցցուած և բնակուած, յանկարծական երադութեամբ՝ քանի մը մէդր տեղիք տուեր են, և Ավկիանոսն զմակերպովիթը ծածկեր է:

Այսպիսի ծախորդութենէ ազատող մարդկանց վրայ Խոր ազգ հցութիւն մը ըրած է ողողմանքն, որոյ վրայօք յետոյ հետաքրքրական վէպեր հնարուեցան. ինչպէս է օրինակի համար Առանձինութիւնն : Դարձեալ, բնութեան հարուածներէն մէկն ալ ասոր պէս ահաւոր կերպով ապականիչ չէ. և նոյն իսկ երկրաշարժներն ալ համեմատութեամբ քիչ փաս կը հասցընեն, վասն զի գէթ կը թողուն գերկիրն՝ որոյ վրայ կրնայ բնակուիլ. մինչդեռ ողողմունքներն կամ երկար ժամանակ և կամ բոլորպին կը ծածկեն զայն ջրերու տակ: Բայց հիմայ որ երկրիս արտօքին մասն պնդացեր է, և ծովերու ընդունարաններն քիչ շատ որոշ ձև մ'առած են, այս ելեէններն շատ զանդաղ տեղի կ'ունենան, առանց յանկարծական թափով գուրա զեղանելու: առանց ողողելու: Շատ երկայն ժամանակի է՝ որ մարդկութիւնն այսպիսի հարուած չէ տեսեր. շատ տարբեր բնական պատահարներ կան, որք կինուն սակաւոթիւ տեղերու մէջ յառաջ բերել ծովու յան կարծական ողողմունքն. այս երեսյթներն կը յառաջանան, երբ ծովս արտօքոյ կարգի բարձրանայ շրջանաւոր մրրիկներէ կամ հրաբուղիներու առժամանակեայ աղղեցութենէ, որոց վրայ յետոյ պիտի խօսինք:

Այս պատճառաւ Գանգէս կզիին շատ անգամ՝ ջրերով ծածկուեցաւ, և նոր Հոլանտայի Հնդկաստանի մէջ ամբողջ գաւաներ յանկարծակի ջրերու մէջ կ'ընկղմին՝ ծաւայի հրաբուղիներուն պատճառաւ:

Ահաւասիկ իբրև հրաբջական Ջըր-

1 Ամանդիտ կզին կը դառնուէր ԱՎիանոսի մէջ, հանգէա Հերակեայ արձաններուն, որ ըստ

հեղեղի մ' օրինակ, նաւասակի մը ցուալիք պատմութիւնն, որ մինակ կրցաւ ապրիլ՝ զուարճատեսիլ Անժէր քաղաքէն, զոր աղէկ կը ճանշեն Յունատի կըրծէն նաւագութիւն ընողներն: և նուալուն ափանց վրայ կեցեր էի, երբ տեսայ որ սկ ջրոյ ահազին կոյտ մը՝ որ խոր ծովէն կու գար, և կարծես թէ մինչև երկինք բարձրացեր էր, արագութեամբ և շառաջելով յառաջ դէպ առիս կը մերձենար: Վայրիկենէ մը յափշտակուեցայ հեղեղէն, և վերջին մասն համած կարծելով զինքս Աստուծոյ յանձնեցի: Գերադոյն զօրութիւն մը զիս ջրոյ վրայ բռներ էր, և որշափ ալ հեռու նայէի՛ միային ծովու ալիք կը տեսնէի: Վերջապէս ծառի մը վրայ նետուեցայ, ուր կրցայ կախուած կենալ. այս ծառին գագաթէն՝ որոյ վրայ կըրցայ ենին՝ նայեցայ. Հոն՝ ուր քիչ մ'առջ Անժէր քաղաքն էր, այժմ՝ ալէս սաստ ծով մը կը տեսնէի, ուր դուրս ցցուած էին ծառերու ծայրեր և քանի մը յարկաց զագաթունք: Յանկարծ ջըրերն կ'իննեն և 'ի ծովս կ'ամփոփուին. աշբովս կը տեսնէի որ հիանալի երագութեամբ կը վազէին, և անմիջապէս կրցայ վար կիննել երկրի վրայ. ազտամած էի: Շուարած՝ Անժէրի փողոցներուն մէջ կ'ընթանամ, բայց ամէն տեղմաս և աւերակ կը տեսնեմ: Քաղաքն աւերակաց կըյտ մը դարձեր էր, ամէն կողմ դիակունք: Մարսափած Անժանիք վարչութեան կը գիմեմ:

Ծովու յատակն վայրիկեան մը բարձրացեր և վերջը զօրաւոր ցնցմանը՝ իր առաջին զիրքը վերսախին սասցեր էր: Անօգուտ է հս առաջ բերել Գաղղոյ Ռէն, Լուառ, կարոն մեծամեծ գետերուն ողողմանքները, որք ժամանակ մը շատ վասնգաւոր էին: Այս հարցուածներուն դէմ զարմանալի կերպով կռուեցան քաջ ճարտարապետութեան ձեռքով՝ այս գետերուն և իրենց մէջ թափող գետակաց անմունքն դրեթէ աւանդութեան հնոց անհետացաւ ծովու ալեաց ողողմունքն:

թուաբանական ճշգութեամբ ժամ առ
ժամ նշանակուած են: Գարձեալ Գող-
զիոյ լերանց վրայ նորանոր անտառներ
անկելու ջանիք, զիսաւոր հովտաց սահ-
մանազլուխներն ճարտարութեամբ ՚ի
գործ գրուած զգուշութեամբք, և շատ
վտանգի մէջ եղող երկիրները պաշտ-
պանելու համար կանցնուած թումբ-
լով՝ գրեթէ միշտ պիտի կարենան
պաշտպանել զգաւառն ընդդէմ այս
հարուածներուս. ժամանակի կամ մա-
նաւանդ գրամս խնդիր է: Բայց սա-
կայն պէտք է համոզուիլ որ շատ գորուա-
րին է սահման մ'որոշել, ուսկից անդին
չկարենայ երբեք անցնիլ յրոց աճումն:

Օդաբանական ատրեւք կան՝ որք եր-
բեմն անըմբունելի են: Ամէն մարդ գի-

տէ Հունգարիոյ մէջ լիեյսի ողովման
նոր հանդիպոծ ձախորդութիւնները,
Մուրսիի զժբաղդութիւնները, և մա-
նաւանդ վերին իտալիոյ մէջ ջրոց դեռ
նոր հասուցած աւերմունքը: Նոյն իսկ
Հունգարիոյ մէջ, ուր կարծես թէ Տիբերիս
գետն այնշաբի երկիւզալի չէ, երբեմն
ահաւոր ողովումներ կը հանգիպին: իմ
բնակած պանդոկիս, որ էր Մինէրվա,
սեղանատան մէջ՝ կը ցուցընէին ինձ
վերջին մեծ ողովման ատեն՝ ջրոց հա-
սած բարձրութիւնը: Աւելի շարագոյն
այն է՝ որ ողովմանէ վերջն ընդհանրա-
պէս Հունգարիոյ մէջ շտո վտանգաւոր և
ատրափնիկ ցաւ մը կը սկսի:

Շարունակիլ:

ՓՈՍՓՈՐԱՓԱՅԼՈՒՄՆ ԱԴԱՄԱՆԴԻ

Հին աւանդութեանց մէջ յիշատա-
կուած կը գտնուին շատ անգամ գո-
հարներ, որոց մեծ յարգ կ'ընծայուէր՝
իրենց լցոյ ճառտպայթելու յատկու-
թեան պատճառաւ: Այս յատկու-
թիւնս բնական արդիւնք է շատ մը գո-
հարներու, որք ընդունած լցուերնին
սաստիկ բեկրեկմամբ կը ցուացընեն.
Բայց ոչ այսպէս է ադամանդին փոսփո-
րափայլումն. վասն զի ադամանդն սե-
փական յատկութեամբ մը արեւուն լց-
որ որպէս թէ կը ծծէ, և զայն միտու-
թեան մէջ կը ճառտպայթէ: Ադա-
մանդն այս յատկութիւնը կրնայ ստա-
նալ շիմամբ և կամ ջերմութեամբ: Բայց
մինչեւ ցայսօր ադամանդին այս
յատկութեան վրայ սակաւաթիւ գի-
տողութիւնք եղել էին, զի փոդայ հա-
մար՝ մեծաղանգուած ադամանդի կա-
րուառութիւն կար. և մեծամեծ ադա-

մանդներն դժբախտաբար գիտնակա-
նաց փափաքը գոհացընելու սահմա-
նեալ չեն, այլ իբրև անդին գոհար-
ելէնք՝ սակաւուց միտյն վերտպահեալ:
Բայց վերջներս գոհարավաճառաց ընկե-
րութեան մը ձեռքն հասաւ 368 ցորե-
նահտափ ծանրութեամբ ադամանդ մը,
ամենազեղեցիկ պայծառութեամբ, ա-
մենակատարեալ երկրաչափական ձե-
ւերով . . . և իր 300000 ֆրանգաց ար-
ժէքով: Այս գոհարով՝ ադամանդին
փոսփորափայլման նկատմամբ զանա-
զան փորձեր կատարեցին. և ստուգուե-
ցաւ՝ որ ժամ մը արեւու տակ կինալէն
յետոյ կարող է գոհարն մութ տեղւոյ
մէջ մօտ գրուած ձերմակ թուղթ մը
ամենորոշ կերպով ցուցընելու չափ
լուսաւորել: Նցն արդիւնքն կը տես-
նուի, թէպէտ և նուազագոյն աստի-
ճանաւ, երբ փոխանակ լուսոյ արեգա-
կան վալդայի կամարին լցուը գործ-
ածնիք, և կամ երբ քանի մը վայրկեան
զուտ ասուեզինով զազամանգը շփենք:

